

# Վերապատրաստվող ուսուցչի Հետազոտական աշխատանք

**Թեմա՝** ուսուցչի համագործակցումը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում

**Ուսուցչուհի՝** Վարդուհի Եղիազարյան

**Դպրոց՝** Փշատավանի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

**Վերապատրաստող՝** Նարինե Վասիլյան



## Բովանդակություն

- Ներածություն /նախաբան
- Նպատակ
- Խնդիրներ
- Համատեքստ և գրականության ակնարկ
- Գործնական համատեքստ
- Ամփոփում/ եզրակացություն/
- Գրականության ցանկ



<<Ի՞նչու ես ատեմ երեխային  
այսօրվա վատի համար, ես նրան  
կսիրեմ այն լավի համար ,ինչը նրա  
մեջ դաստիարակելու եմ վաղը >>:

Վ.Ա.Սուխումլինսկի

## Ներածություն

Կարծում եմ թեման բավականին արդիական է, քանի որ այսօր դպրոցներում առաջնային,կարևոր համարվող հարցերից մեկն էլ ուսուցիչ-աշակերտ-ծնող օղակի սերտ պահպանման ապահովումն է:Այս օղակի սերտ պահպանմանը կարևորություն է տրվում դեռ նախակրթարանից :Բնականաբար ծնողի կամ օրինական ներկայացուցչի ներգրավվածությունը սեփական երեխայի կրթության գործընթացին տալիս է մի շարք դրական արդյունքներ:Ուսուցչի նպատակը միշտ եղել է անփոփոխ՝ նախապատրաստել աշակերտին կյանքին, ձևավորել ժամանակաշրջանի համար հասարակության լիարժեք , ակտիվ, քննադատող, մտածող, վերլուծող քաղաքացի, մյուս կողմից էլ ծնողի կամ օրինական ներկայացուցիչների նպատակն է տեսնել իր երեխային կայացած անհատի,այսինքն այս երկու կողմերի դրական շահերի բախման հետևանքով կունենանք լավ արդյունք :Ուստի շատ կարևոր է ,որ այդ համագործակցությունը լինի գրագետ, կողմերի նկատմամբ ցուցաբերվի ճիշտ մոտեցում , յուրաքանչյուր քայլ մշակել այնպես ,որ կողմերը շահագրգիռ լինեն համագործակցության :

Բնականաբար դրական արդյունքի հասնելու համար ուսուցիչը միայնակ չի կարող



գործել , փետք է փոխադարձաբար միմյանց օգնելով գործել:

Երեխայի կրթությունը պետք է ուղղված լինի երեխայի անհատականության , ստղանդի, մտավոր ու ֆիզիկական ունակությունների զարգացմանը :Այսպիսով ուսուցիչ- դպրոց- ծնող համագործակցության պահպանումը առնձնահատուկ նշանակություն ունի աշակերտի հաջողության գրավականի համար:

Երեխայի ժառանգական տվյալները ներդրված են ուղեղի կառուցվածքում , զգայարաններում, խոսքաշարժողական օրգաններում և որևէ գործողություն կատարելու հաջող պայմաններից են : Մակայն այդ հաջողությունը մեծ մասամբ ապահովվում է ջանասիրությամբ, աշխատասիրությամբ :

Չմոռանանք նաև , որ կայացած , հզոր պետության հիմքը առջ, վերլուծող,դատող հասարակությունն է և դրա կայացման ծանր , պատասխանատու , բարդ

բեռը դրված է ուսուցչի ուսերին, քանի որ ուսուցիչն է ստեղծում լավ բժիշկ , իրավաբան, հողագործ, ի վերջո նա է տեսնում իր առջև նստած աշակերտի մեջ երկրի ապագան կերտող քաղաքացուն : Ուսուցիչը նախ և առաջ պետք է ապրի աշակերտի հոգսերով, խնդիրներով և աշակերտի ձեռքբերումները համարի նաև իրենը: Հենց այդ նվիրվածության մեծ զգացումի շնորհիվ մենք կունենանք կայացած, հզոր պետություն :

Հաշվի

առնելով այս ամենը յուրաքանչյուր ուսուցիչ պետք է լինի ծնող և յուրաքանչյուր ծնող պետք է լինի ուսուցիչ , ուստի նրանց համագործակցումը աշակերտի , երեխայի լավագույն գրավականն է:

## Նպատակ

- ուսուցչին զինել գիտելիքներով , կարողություններով , որոնք անհրաժեշտ են ժամանակակից մանկավարժական գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար:

## Խնդիրներ

- աշակերտների մոտիվացիայի բացակայություն
- կարգապահական խնդիրներ
- ծնողները չեն աջակցում
- սոցիալական խնդիրներ
- աշակերտների անտարբերությունը ուսման նկատմամբ

-ՄԱԿԻ Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիայի հոդված 28,29

## Համատեքստ և գրականության ակնարկ

Սովորողների դաստիարակության և կրթության գործընթացը բխում է առաջին հերթին հասարակության զարգացման պահանջներից, սովորողների դաստիարակության և կրթության գործընթացից :

Ամեն պարագայում, ամեն իրավիճակում հնարավոր է ելք գտնել երեխայի հետ խոսելու, զրուցելու , ճիշտ ուղղու վրա դնելու համար: Առաջին հերթին նախ անհրաժեշտ է հասկանալ երեխայի հոգեվիճակը ,երեխային հուզող հարցերը, ձեռք բերել նրա վստահությունը, ապա առանց երեխային կոտրելու , վիրավորելու ցույց տալ և բացատրել նրա բացթողումները և վրիպումները՝ միաժամանակ նշելով, որ յուրաքանչյուր ոք ունի սխալվելու իրավունք : Այս մոտեցումը բնականաբար կօգնի

Երեխաներին ուղղվելու և վերլուծելու սեփական արարքները:Այսօր շատ բարդ է ուսուցչի աշխատանքը, բարդացել են ուսուցիչ –աշակերտ հարաբերությունները, ինչն էլ իր հերթին ազդում է բնականաբար ուսումնական գործընթացի վրա: Աշխարհը զարգանում է ,արագ փոփոխվում և այսօրվա աշակերտը շատ է տարբերվում երեկվա սովորողից :Պետք է ստեղծել այնպիսի միջավայր , որտեղ երեխան պետք է մտնի ուրախությամբ, ստանա նաև շատ հարցերի պատասխաններ : Մանկավարժի համար շատ դժվար կլինի միայնակ հասնել հաջողության : Համատեղ հաջողության հասնելու համար շատ կարևոր է աշակերտին ճանաչել , հասկանալ, աջակցել և գնալ խելամիտ փոխզիջումների:և ի վերջո , ստեղծել այնպիսի մթնոլորտ , որ վերանա զգացմունքային լարվածությունը և վախի զգացողությունը: Այս խոչընդոտը հաղթահարելուց է , որ համատեղ գործունեությունից երկուստեք բավարարվածություն կլինի:Լավ ուսուցիչը կոչված է փոխօգնության, վստահության, համագործակցության և անվտանգության ապահովման :

Աշակերտի ակտիվ գործունեության ճիշտ կազմակերպումը, նրա ձայնը, կարծիքը լսելն ու լսելի դարձնելը, նրա տարիքին համապատասխան շարժվելը, վերջապես, ուսուցչի կողմից բոլոր իրավիճակներում զսպվածության, արժանապատվության,

հեղինակության և հավասարակշռության գիտակցումը, նրան հաջողության կրեքեն, ինչի արդյունքում նա սիրել կտա ոչ միայն դպրոցը, այլ նաև ուսուցչի այդ պատասխանատու և շատ կարևոր մասնագիտությանը : Իր մասնագիտությունը սիրող և գնահատող ուսուցիչը միշտ պատրաստ է միասնական գործունեության:

Նա ունի աշակերտների ծնողների , նրանց օրինական ներկայացուցիչների հետ համագործակցելու և հիմնախնդիրները լուծելու փորձ՝ հիմնված ընդհանուր արժեքների ,գաղափարների և միմյանց փոխադարձաբար ը նդունելու, իրար նկատմամբ նկատմամբ բարյացակամ տրամադրվածության վրա:

Շատ կարևոր է, որ մանկավարժը ընդունի միասնական գործին մասնակցելու, խմբում աշխատելու և համագործակցելու, ինքն իրեն ընդհանուրի մասը ընկալելու գաղափարը : Դիպուկ կարելի է համեմատել մանկավարժի և այգեպանի աշխատանքը: Դժվար որևէ այգեպան ,իր կողմից աճեցրած, խնամված տնկին գիտակցաբար վնասի, նույնը նաև մանկավարժը :Շատ կարևոր է , որ մենք էլ նաև չվնասենք մեր աշակերտներին, չվիրավորենք նրանց արժանապատվությունը ,այլ օգնենք, որ գիտակցեն կրթության կարևորությունը :

Ուսուցչի և աշակերտների միջև սերտ փոխհարաբերության պարտադիր պայմանը մանկավարժական տակտի առկայությունն է , որը մեծ մանկավարժ Ուշինսկին համարում է հոգեբանական տակտ :

Յուրաքանչյուր ուսուցիչ աշակերտի հետ ունենում է որոշակի հարաբերություններ, մեկի հետ ավելի մոտ , մյուսի հետ կարող է լինել մի փոքր պակաս, բայց այդ հարաբերությունները ունեն շատ մեծ նշանակություն: Առաջին հերթին , ուսուցիչը կարող է ունենալ դրական ազդեցություն՝ աշակերտին դնելով ճիշտ ուղղության վրա: Ուսուցիչ –աշակերտ հարաբերությունները երկկողմանի գործընթաց է, և այդ գործընթացի երկու կողմերն էլ փոխադարձաբար ներազդում, պայմանավորում ու ձևավորում են միմյանց :

Աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերությունների առողջ լինելն առաջին հերթին կախված է նրանից ,թե արդյոք աշակերտը կզգա , որ իրեն սիրում են: Աստեղից կծնվի սերն ու վստահությունը ուսուցչի նկատմամբ :

Այնուամենայնիվ երեխայի դաստիարակության բարդ , պատասխանատու գործընթաց է և նրա նշանակությունը չի կարելի չզնահատել ,չի կարելի ինքնահոսի թողնել :

Դեռևս նանադարյան հասարակության մեջ տոհմը , մարդկային հանրությունը երեխաների դաստիարակությունը հանձնարարում էր առավել խելացի, փորձառու,ուժեղ մարդկանց, որոնք արդեն հատուկ կերպով, հատուկ պայմաններում , քիչ թե շատ հետևողականորեն կազմակերպում են տվյալ հանրության երեխաների, հաճախ սերնդի զարգացումն ու ձևավորումը :

Դաստիարակությանը նպատակաուղղված ներգործունեությունն է երեխաների ու երիտասարդության գիտակցության ու վարքի, նրանց աշխարհայացքի, արարքների, սովորույթներ վրա: Հենց դաստիարակությամբ էլ նշանակալի չափով պայմանավորում են այն փոփոխությունները, որ կրում է մարդը ծնվելու պահից մինչև հասուն դառնալը : Շրջապատի մարդիկ այսպես թե այնպես ազդում են մարդու մտքերի և արարքների, նրա աշխարհընկալման և իր վրա `անանկախ նրանից նա դա ուզում է ,թե ոչ: ԵՎ իհարկե, շատ մեծ է այդ ազդեցությունը երեխաների վրա:Երեխաները սպունգի նման ներծծում են այն ամենը , ինչ կատարվում է նրանց շուրջը : Նրանք մեծ հաճույքով կրկնում են իրենց շրջապատող մարդկանց և ծնողների խոսքերը ,միմիկան ,ժեստերը, վարքի ձևը : Ուստի շատ կարևոր է , որ ծնողները ,ուսուցիչները գիտակցեն ,որ հատկապես իրենցից, իրենց համագործակցությունից է կախված ,թե ապագայում ինչպիսին կդառանա իրենց երեխան ,սովորողը : Կլինի նա երաջանիկ , վստահ իր ուժերին , թե կլինի բարդույթավորված ,չունենա որոշակի գիտելիք , հմտության պաշար: Սովորողի դաստիարակության ընթացքում կարելի է և հարկավոր է համագործակցել ծնողների, նրանց օրինական ներկայացուցիչների հետ,հարկավոր է հասկանալ այն բնավորության գծերը և երեխաների պահվածքը ,որոնք հակասում են ծնողի սկզբունքներին :





Հրկավոր է լինել հոգատար, հարգանքով վերաբերվենք այն ամենին ինչ երեխան անում է , անհրաժեշտ է հաճախ զրուցել , հարցնել կարծիք և խորհուրդ :Ընտանիքի և հասարակության հետ կապն առանձնահատուկ նշանակություն ունի անձի զարգացման համար :Ուսուցիչը իր նպատակին հասնելու համար պետք է համագործակցի նաև սովորողի ծնողների , օրինական ներկայացուցիչների հետ ,որպեսզի արդյունքը ավելի արագ նկատվի : Դասղեկը, ուսուցիչը նպաստում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը :

Այսպիսով կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության ոլորտում համագործակցումը ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ առավել արդյունավետ կլինի ,եթե ճիշտ կազմակերպենք և անցկացնենք ծնողական ժողովները ,որտեղ կկարողանանք կառուցողական մթնոլորտ ստեղծել և համատեղ աշխատանքի արդյունքում կշահի մեր աշակերտը ,վաղվա քաղաքացին:

*<<ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության>>*

*ՊՈԱԿԻ օրինակելի կանոնադրություն :*

*Ս. Սեդրակյան ,, Ընտանիքի հոգեբանություն ,, Երևան 2010թ.*

*Ա. Պետրոսյան ,, Դասղեկի աշխատանքների կազմակերպումը դպրոցում,,*

Ինչ պետք է անել

1. Որոշել մեկ առավել կարևոր խնդիր ,որը վերաբերում է տվյալ դասարանի աշակերտներին, և դրա քննարկման հիման վրա ձևավորել գրույցը ծնողների հետ :

2. Կարելի է սեղանները և աթոռները դասավորել շրջանաձև ,որպեսզի բոլոր ծնողները լավ տեսնեն և լսեն միմյանց,շփումը լինի շատ անմիջական :

3.Ժողովի ընթացքում կիրառել խաղեր և ծնողների համագործակցության կազմակերպման խմբային ձևեր:

4.Կարելի է խնդրահարույց հարցերի քննարկման ժամանակ հենվել առավել կենսափորձ ունեցող ծնողների կյանքի և մանկավարժական փորձի ,ծնողկոմիտեի անդամների և դպրոցի խորհրդի կարծիքների վրա :

Որպեսզի ձևավորվի ջերմ և հարգալից մթնոլորտ ,անհրաժեշտ է հանել սեփական լարվածությունը ,անհրաժեշտ է խոսքի ,ինտոնացիայի ,ժեստերի միջոցով ցույց տալ ծնողների նկատմամբ հարգանք, ուշադրություն, ճիշտ որոշել խնդիրները ,որոնք առավել անհանգստացնում են նրանց ,խոսել հանգիստ և բարեհամբույր :

Շատ կարևոր է համագործակցել ծնողների և հոգեբանի հետ : Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում աշակերտը ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն, բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտների մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում :Մրանք այն շատ կարևոր գործոններն են , որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում :

Ինչ է նշանակում << ծնողների ներգրավվածություն >> : << Ծնողների ներգրավվածություն >> տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը, այնպես էլ դպրոցում : Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտների ակադեմիական առաջադիմության բարելավմանը : << Ծնողների ներգրավվածություն >> նշանակում է

ծնողների մասնակցությունը կանոնավոր , բազմակողմանի կապերում , աշակերտի ուսման գործընթացում և դպրոցի այլևայլ միջոցառումներին : << Ծնողների ներգրավվածությունը >> ծնողների համար կարող է նախատեսել:

Ուսուցիչների հետ կանոնավոր հանդիպումներ և իրենց երեխաների առաջընթացի քննարկում :

.Դպրոցի համար իրական պահանջների նախանշում:

.Տնային առաջադրանք կատարելիս աշակերտներին օգնություն ցուցաբերել :

Տնօրենների և ուսուցիչների համար ծնողների ներգրավվումը դպրոցական կյանքում նշանակում է.

.Ծնողներին իրենց երեխաների առաջընթացի մասին համապատասխան տեղեկատվության ապահովվում :

.Ծնողների համար տեղեկատվության հաղորդում դպրոցի միջոցառումների մասին:

.Պարբերաբար հանդիպումների կազմակերպում աշակերտների առաջընթացի քննարկման նպատակով :

Կարևոր է իմանալ ,որ << ծնող >> ասելով չպետք է հասկանալ միայն մայր կամ հայր :Ծնող կարող ենք համարել այն բոլոր անձանց , ովքեր ներգրավված են երեխայի դաստիարակման գործում : Որպես օրենք , հայրն ու մայրը հոգում են երեխայի դաստիարակման հարցում պատասխանատվություն են կրում տատիկը, պապիկը, մորաքույրը, հորաքույրը, խնամակալը և այլն :

Առաջին հերթին ծնողը պետք է երեխայի մոտ ձևավորի բարձր ինքնզնահատական:

Ինչքան շատ երեխան սիրի ու հարգի ինքն իրեն այնքան լավ կվերաբերվի շրջապատի մարդկանց և բնականաբար լավ կարծիքներ կարժանանա :

Շատ դեպքերում , երբ ծնողները տեսնում են ,որ իրենց երեխան մեծանում է , վախենում են նրանց հեռանալուց, որի արդյունքում նրանք ամեն կերպ երեխաների մեջ սերմանում են մանկական որակներ, որն էլ հատկապես դեռահասության տարիքում կարող է հազնգեցնել ծնող-երեխա հարաբերությունների խաթարմանը, քանի որ դեռահասները ավելի շատ ձգտում են մեծահասակներին բնորոշ որակներ

ձեռք բերել և համապատասխան գործունեություն ծավալել :

Այս ամենից կարելի է եզրակացնել ,որ երեխաները ծնվում են ոչ միայն նրա համար,որ մենք նրանց դաստիարակենք , այլ նաև նրա համար որ նրանք մեզ դաստիարակեն, որպեսզի երեխային դարձնի լավագույնը , լավ ծնողը ինքը պետք է դառնա ավելի լավը:

Ծնող-երեխա-ուսուցիչ փոխհարաբերությունների ամենակարևոր կողմերից մեկն է նաև երեխայի ազատ կիսվելը ծնողի հետ : Նման հարաբերություններ հաստատելը և բայց զրույցներին հասնելը ժամանակ, համառություն և փոխըմբռնում է պահանջում: Ծնողները նաև պետք է ժամանակ գտնեն յուրաքանչյուր երեխայի հետ անհատապես անցկացնելու, հատկապես պետք է զրուցել երեխային հուզող կամ խանգարող խնդիրների մասին :

Դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների համար :Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զրգացման վրա մեծ ազդեցություն է գործում : Հետազոտությունների համաձայն , աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին , ավելի լավ արդյունքների են հասնում.

.Ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական գիտելիքներ :

.Վիճակագրական տվյալներով ,եթե ծնողները կապված չեն ուսուցիչների հետ կամ հետաքրքրված չեն դպրոցի առճրյա կյանքով, դրանց երեխաների ակադեմիական առաջադիմությունը մյուս երեխաների համեմատությամբ ավելի ցածր է:

.Երբ ծնողները ներգրավված են դպրոցի կյանքում ,աշակերտներն ավելի դրական են տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունեն :

.Այն աշակերտները, որոնց ծնողներն ակտիվորեն են ներգրավված դպրոցի կյանքում ավելի լավ վարք ունեն, և նրանց դեմ կիրառված կարգապահական պատժամիջոցների միջին ցուցանիշները ավելի ցածր են մյուսների համեմատությամբ :

.Դպրոցի կյանքին մասնակից ծնողների երեխաները ավելի լավ հարաբերություններ ունեն ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ :

.Տարբեր քաղաքակիրթ միջավայրներից դուրս եկած աշակերտները ավելի առաջադեմ են , երբ ծնողները և ուսուցիչները միասնաբար ձգտում են ընտանիքում և դպրոցում եղած կուլտուրական տարբերությունների համատեղ համաձայնեցմանը :

Ուսուցչի աշխատանքախի արդյունքները միշտ չէ,որ անմիջապես շոշափելի են: Ամենից հաճախ դրանք որոշ ժամանակ անց դրսևորում են ուսանողների անձնական որակների մեջ : Ըստ A.V.Lunacharsky-ի սահմանման ուսուցիչը այն մարդն է, ով կերտում է ապագան :Նա մեծապես գործոն է այս ապագայում : Միայն անհատականությունն է ունակ դաստիարակել անհատականություն : Հետևաբար պարզ է ,որ ուսուցիչի ինքնին զարգացումը , նրա մտավոր, բարոյական և մասնագիտական հատկությունները պետք է գերազանցեն սոցիալական միջավայրի մակարդակին : Դա հնարավոր է , եթե ուսուցիչը գիտակցի իր սոցիալական բարձր պատասխանատվությունը , ճանաչողական գործունեությունը ,մշտական օբյեկտիվ ինքնազննումն ու ինքնակատարելագործման համակարգված աշխատանքը :

Հետազոտություններն ապացուցել են ,որ ինքնուրույն դաս տալու մեթոդները, ձևերը, տեխնիկան չեն ապահովում հաջողություն աշխատանքում , եթե դրանք պայմանավորված չեն ուսուցչի անձնական հատկություններով :Մանկավարժական փոխազդեցության գործընթացում ուսանողները ձեռք են բերում ոչ միայն գիտելիքներ ,ունակություններ հմտություններ, այլև դառնում ուսուցչի անձնական որակների կրողներ :Ուսանողն ավելի պատրաստակամ է սովորել այն պայմաններում ,եթե զգում է սեփական զարգացումը :

[www.hogeban.info](http://www.hogeban.info)



Շահագրգիռ հաղորդակցության ապահովումն հիմնված է ուսուցչի իր աշակերտի նկատմամբ հատուկ զգայունության ,տեղեկատվություն ներկայացնելու գործընթացում մտավոր երկխոսություն օգտագործելու ունակության վրա :

„ Եթե ուշադիր նայենք այն մարդկանց ովքեր չեն կարող գովել որևէ մեկին , մեղադրել բոլորին և գոհ չեն որևէ մեկից, ապա կիմանաք, որ դրանք հենց այն մարդի են ,ովքեր ոչ մեկից գոհ չեն,, J.Labruye

Փոխհամագործակցության որակի բարելավման մեկ այլ ասպեկտ է դասարանում հաջողության իրավիճակների ստեղծումը :Մա գործնականում անհնար է առանց ուսուցչի քրտնաջան աշխատանքի , իր անձնական որակների զարգացման : Երջանիկ մարդուն կարող է մեծացնել միայն երջանիկ մարդը :Աշակերտի հաջողությունը կարող է ստեղծել ուսուցիչը, ով ինքն է զգում հաջողության բերկրանքը : Ի վերջո ուսուցչի խնդիրն է յուրաքնչյուր աշակերտի հնարավորությունն տալ զգալու բերկրանքը, գիտակցելու իր հնարավորությունները , հավատալի իրենց :Այսպիսով մանկավարժական գործընթացն ուղղված է ապագա սերնդի կրթության ու դաստիարակության խնդիրների լուծմանը, աշակերտների ընդունակությունների և անձնային որակների բացահայտմանն ու ձևավորմանը :Այն ունի դինամիկ բնույթ և փոփոխական է :Մանկավարժական ողջ գործընթացը կաազմակերպված է մանկավարժական գործունեության ընթացքում հանդիպող մանկավարժական այս կամ այն իրավիճակներից , որոնք լուծման ,շտկման , կարգավորման կարիք ունեն : Մանկավարժական գործընթացում հանդիպող շատ իրավիճակներ վերածվում են մանկավարժական խնդիրների՝ մանկավարժներին , աշակերտներին ու նրանց ծնողներին դրդելով իրավիճակների վերլուծությանը, առջարկվող լուծումների, տարբերակների գնահատմանը,լավագույն տարբերակի ընտրությանը և իրականացման պլանի մշակմանը:

Գ.Ն Հարությունյան,,Մանկավարժական խնդիրները և դրանց լուծման ուղղիները տարրական դպրոցում,,2014



Շատ կարևոր է ,որ դասավանդող ուսուցիչները ուշադրություն դարձնեն ցանկացած մանկավարժական իրավիճակին, ճիշտ մոտեցում ցուցաբերեն և խնդրահարույց իրավիճակին համապատասխան լուծում տան՝ ելնելով մանկավարժական գործընթացի նպատակից, մանկավարժական իրավիճակի բնույթից, աշակերտների տարիքային առանձնահատկություններից և այլն :

Ուսուցչի և աշակերտների համագործակցության կարևոր նախապայմաններից մեկն այն է, որ երեխան պետ է սովորի հարմարավետ պայմաններում :Դա անելու համար կարևոր է գտնել կապը ուսուցիչների հետ , միայն հանգիստ միջավայրում երեխան կարող է հետաքրքրություն ունենալ սովորելու մեջ :

Երեխայի կյանքում ամենակարևորը ոչ միայն դասընկերների հետ կապ հաստատելն է, այլև ուսուցչի հետ : Աշակերտը պետք է իմանա, թե ինչպես արձագանքել դիտողություններին և նշումներին ճիշտ ,իսկ ծնողները պետք է սովորեն շփվել և կապ հաստատել ուսուցիչների և իրենց երեխայի հետ : Փոխհամագործակցության արդյունքում ուսուցչի և աշակերտի փոխհարաբերությունները փոխվում են , և ուսուցման նկատմամբ նույնպես վերաբերմունքը փոխվում է :

Համագործակցության արդյունքում մենք կտեսնենք ուսուցիչ ,ով հարգում է աշակերտին , զարգացնում է նրան որպես անձ: Ուսուցիչը պետք է աշակերտին ներկայացնի հնարավոր պահանջները :Շատ կարևոր է ,որ ուսուցիչը համակիր լինի թույլ և ամաչկոտ երեխաների համար : Հայտնի մանկավրժ Մոնտեսորին ասում էր ,, Միայն իրական և ազատ ինքնություն մարդիկ կարող են կարգապահ լինել ,, : Ուստի համագործակցության արդյունքում պետք է ստեղծվի նաև վստահության և ազատության մթնոլորտ :Աշակերտները ովքեր սովոր չեն ազատության, հայտնվելով ազատության մեջ անկանոն վարք են դրսևորում,որովհետև ուղղակի դժվարանում են կողմնորոշվել ազատության մեջ:Ազատությունը հմնարար իրավունքն է մարդու, և մարդն իսկապես ազատ է, մենք պարզապես չպիտի նրան զրկենք ազատությունից :Եվ եթե մենք ի սկզբանե երեխային չենք զրկում իր ազատությունից, թույլ ենք տալիս ,որպեսզի նա ինքնուրույն զարգանա և ինքնակազմկերպվի, երեխաները մեծանում են կարգապահ :

*Ս.Խաչատրյան ,boon.am*

## Գործնական համատեքստ

Այսպիսով ինչ քայլեր կարելի է ձեռնարկել , որպեսզի համագործակցումը աշակերտի ծնողի կամ օրինական ներկայացուցչի հետ `սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում ավելի արդյունավետ լինի: Առաջնահիթ պետք է փոխվաստահության մթնոլորտ ձևավորվի ծնող-ուսուցիչ -աշակետ օղակի միջև: Այս քայլերում դրական արդյունք կունենաք, եթե ճիշտ վարենք ծնողական ժողովները, որտեղ կկարողանանք կառուցողական մթնոլորտ ստեղծել և համատեղ աշխատել ,դրա համար անհրաժեշտ է առանձնացնել դասարանի համար առաջնային և կարևոր խնդիրներից մեկը ու դրա քննարկման հիման վրա ձևավորել գրույց ծնողների հետ : Որպեսզի շփումը ավելի ջերմ լինի և վստահություն ներշնչի կարելի է սեղանները և աթոռները դասավորել շրջանաձև, որպեսզի բոլոր ծնողները լավ լսեն և լավ տեսնեն միմյանց: Վստահություն ձեռք բերելու համար ծնողներին աջառարկել մտածել կանոններ ,օրինակ ինչպես ,ինչ եղանակով լուծել կարգապահական խնդիրները ,ինչպես խթանել աշակերտների միջև մտերմիկ հարաբերություններ ձևավորելուն :

Երբեմն կարելի է նաև կազմակերպել դեմ առ դեմ գրույցներ, քննարկումներ, փոխանակել տեղեկություններ ,կարծիքներ և ռեսուսներ, երբեմն միմյանց հետ մշակել և վերլուծել որևէ տեղեկություն, քաջալերել և աջակցել միմյանց ընդհանուր նպատակին հասնելու համար:

Երբեմն կարելի է կազմակերպլ այնպիսի խմբային աշխատանք , ստեղծել իրավիճակ, որտեղ խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ կլինի փոխանակել մտքեր ,կրել պատասխանատվություն ուսման որակի բարձրացման համար,կամ պատրաստ կլինի իր գործողություններով նպաստել դասընկերներին խրախուսելու : Որոշ ժամանակ աշխատանք տանելուց հետո խմբի անդամներով քննարկել ,թե համագործակցության արդյունքում ինչ հաջողությունների են հասել:

Համագործակցումը նաև խմբի անդամների միջև ապահովվում է դրական փոխկապակցվածություն:Այսինքն դրական փոխկապակցվածության շնորհիվ խմբում ձևավորում է միմյանց օգնելու,խրախուսելու, աջկցելու մթնոլորտ: Նպաստում է նաև



հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Համագործակցության կարևոր նախապայմաններից էլուսուցման բազմազան միջոցների տիրապետելը :Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է: Համագործակցային ուսուցումն ապահովվում է մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում: Մանկավարժական նշանակությունից բացի, այն ունի նաև հասարակական գործառույթ : Համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար, ուստի այդ հմտությունների ձևավորումն ու զարգացումը պետք է իրականացնել ուսուցման և ուսումնառության գործընթացում՝ ապահովվելով դրանց արդյունավետության գիտակցումն և ձեռքբերումները :

Առաջնային է համարվում նաև ծնողական ժողովների կազմակերպումը: Շատ կարևոր է նաև, որ դասուցելը ծնողական ժողովը վարելուց առաջ հանի սեփական լարվածությունը և տագնապը, խոսքի , իոնտոնացիայի , ժեստերի և այլ միջոցներով ցուց տալ ծնողների նկատմամբ հարգանք և ուշադրություն : Փորձել հասկանալ ծնողներին ,ճիշտ որոշել խնդիրները, որոնք առավել շատ են անհանգստացնում նրանց: Կարելի է օրինակ նախապես պատրասել նմանատիպ հարցաթերթիկներ կամ կարգապահական կանոններ ,որոնք ոչ միայն ավելի հետաքրքիր կդարձնեն ծնողական ժողովները, այլ նաև ուղղություն կտան, թե ինչ թեմայով տանել զրույցը , կամ կարգապահական կանոնների մշակելը և դրանց հետևելը ավելի արդյունավետ կդարձնի մեր աշխատանքը :



## 1. Կազմել հարցաթերթիկ ծնողների համար:

-Այստեղ գրեք այն հարցերը, որոնց պատասխաններով ծնողները մեզ կհուշեն ,թե ինչ թեմայով պետք է կազմակերպվի ծնողական ժողովը:

## **2. Կազմել կարգապահական կանոններ ուսուցչի համար**

Խուսափենք`

-Նախատել ծնողներին բոլորի ներկայությամբ նախորդ ժողովին չմասնակցելու համար

-Համեմատել մի աշակերտին մյուսի հետ

- Բացասական գնահատական տալ ողջ դասարանին

-Գերազնահատել որևէ առարկայի դերը

-Խոսել ծնողների հետ բարձր հրամայական տոնով

Դատելը պետք է լինի անաչառ ,բարյացակամ և ունենա մանկավարժական տակտի մեծ զգացում:

## **3. Կազմել կարգապահական կանոններ դասարանի աշակերտների համար**

- Օգնել միմյանց յուրաքանչյուր իրավիճակում
- Դասերի ժամանակ միջանցքներում խոսել շշուկով , քայլել անաղմուկ
- Համատեղ ուժերով մաքուր պահել դպրոցի շրջակայքը
- Համատեղ ուժերով աջակցել կարիքավորներին , հաշտեցնել կովարարներին, ներել
- Միասին տուն գնալուց առաջ փակել պատուհանները, ապահովվել դասարանի մաքրությունը



## Վերջաբան

Այսպիսով հետազոտությունները ցույց են տվել ,որ ուսուցչի համագործակցումը սովորողի ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ ` կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում ,ոչ միայն բարելավվում է աշակերտների վարքն ու հաճախումը, այլև դրականորեն է ազդում աշակերտների ձեռքբերումներին : Դպրոցի և ընտանիքի միջի երկկողմանի զարգացմանը նպաստող կարևոր գործողություններից մեկն է:

Արդյունավետ հաղորդակցման համար անհրաժեշտ է ,որ ուսուցիչները և ծնողները միմյանց հետ տեղեկատվություններ փոխանակեն : Կանոնավոր և արդյունավետ է , քանի որ աճում է ծնողների ներգրավվածությունը, նրանց կողմից դպրոցի



գնահատականը բարձրանում է և ձևավորվում է դպրոցի նկատմամբ դրական կապվածություն:

Ուսուցիչ-ծնող կապը աշակերտի ուսումնադաստիարակչական գործընթացի նպատակային և բարեհաջող կազմակերպչական կարևորագույն բաղադրի օղակներից մեկն է:

Այսպիսով կարելի է ձևավորել համագործակցության շնորհիվ խելացի, դաստիարակված աշակերտ : Նմանատիպ աշակերտ ստեղծելն էլ հենց բխում են երեք կողմերի շահերից , չմոռանանք աշակերտներին ,որոնք այս ողջ գործընթացի կնտրոնն է , այն կենտրոնը, որի շուրջ պտտվում է մնացած ամեն ինչ:

Հմագործակցության շնորհիվ առաջնային պլան է մղվում միասնական ուժերով վաթթարագույն տարաբնույթ երևույթները արմատախիլ անելու և, գոնե դրական անհրաժեշտ նվազագույնը սերմանելու նպատակով:

Համատեղ աշխատանքի ,փոխըմբռնման , միմյանց արժևորելու և կարևորելու գործոնի շնորհիվ էլ հնարավոր կլինի լուծել համագործակցության բացակայության հետևանքով առաջացած խնդիրները՝ աշակերտների անտարբերությունը ուսման մեջ, կարգապահական խնդիրները , աշակերտների մոտիվացիայի բացակայությունը և նման այլ խնդիրներ : Նաև աշակերտը պետք է հավատա , վստահի ,և ուսուցչին , և ծնողին, և սեփական ուժերին :

#### Գրականության ցանկ

1. Գ. Ն . Հարությունյան «Մանկավարժական խնդիրները և դրանց լուծման ուղղիները տարրական դպրոցում»:
2. Ս. Խաչատրյան . boom .am:
3. ՄԱԿԻ Երեխանների իրավունքների մասին իրավունքների կոնվենցիայի հոդված 28,29:
4. Ա. Պետրոսյան «Դաստիարակչական աշխատանքի կազմակերպումը դպրոցում» :
5. Ավետիսյան դպրոց Մ. Գեղամյան

6.Ս. Սեդրակյան «Ը նտանիքի հոգեբանություն» Երևան 2010

7. [www.hogeban.info](http://www.hogeban.info)

8.Յու. Ա.Ամիրջանյան , Ա.Ս. Սահակյան «Մանկավարժ »2005